

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ

Հպարտորեն շնորհավորում եմ բոլորիս՝ Արցախի Հանրապետության անկախության տոնի կապակցությամբ, որը նշվում է այսօր.

անկախություն, որն ազատ արցախցիները հռչակեցին 27 տարի առաջ, տոն, որը համայն հայության միասնականության եւ հաղթական ոգու ապացույցն է ու խորհրդանիշը: Այն ամրագրվեց նաեւ

արցախահայության հանրաքվեով, իսկ հետագա դժվարին

ժամանակահատվածում նվաճվեց համազգային հերոսական պայքարով:

Անվտանգ, ինքնիշխան Արցախ ունենալու իրավունքը ձեռք բերվեց

բազում սյունեցիների մասնակցությամբ եւս, նրանցից շատերի արյան

գնով. Արցախի սահմանների անատիկությունից է կախված նաեւ

Սյունիքի անվտանգությունը...

Այս տոնին՝ մեր հարգանքը բոլոր նրանց, ովքեր պայքարեցին ներկա

խաղաղության համար, մեր խոնարհումը՝ այն հայորդիների անմար

հիշատակի առջեւ, ովքեր ընկան անկախության կերտման

ճանապարհին:

Բոլոր սյունեցիների անունից կրկին շնորհավորելով ձեզ, սիրելի՛

արցախցիներ, շենացում, հզորացում, բարօրություն, խաղաղ երկինք եւ

մաղթում Արցախի Հանրապետությանը, ամրություն ու հարատեւություն՝

Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնությանը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

